ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

20 փետրվարի 2024թ.

N 520-Ա

ՀՐԱՄԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի թիվ 759-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 2-րդ կետի համաձայն՝ անձին գնումների համակարգողի որակավորում շնորհվում է լիազորված մարմնի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված պաշտոնատար անձի կողմից՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմացության գնահատման նպատակով կազմակերպված քննությունը հաջողությամբ հանձնելու դեպքում:

Կարգի 9-րդ կետի համաձայն՝ քննությանը կարող է մասնակցել այն անձը, ով քննությանը մասնակցելու էլեկտրոնային համակարգում գրանցվելու օրվա դրությամբ՝

1) ունի բարձրագույն կրթություն.

(...):

Կարգի 10-րդ կետի համաձայն՝ քննությանը մասնակցելու համար անձը www.minfin.am կամ www.procurement.am հասցեներով գործող ինտերնետային կայքերում առկա քննությունների գրանցման էլեկտրոնային համակարգի միջոցով լրացնում է լիազորված մարմնին ուղղված դիմում և համակարգում կցում բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակով՝

1) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը.

(...):

Կարգի 24-րդ կետի համաձայն՝ գնումների համակարգողի որակավորումը դադարեցվում է լիազորված մարմնի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված պաշտոնատար անձի կողմից՝ հետևյալ փաստերից որևէ մեկի հայտնի դառնալու դեպքում՝

1) քննությանը մասնակցելու նպատակով կեղծ փաստաթղթեր կամ ոչ արժանահավատ տեղեկություններ ներկայացնելը.

(...):

Կարգի 25–րդ կետի համաձայն՝ Կարգի 24-րդ կետով նախատեսված փաստերից որևէ մեկի հայտնի դառնալու դեպքում լիազորված մարմինը գրավոր ծանուցում է տվյալ գնումները համակարգողին և միաժամանակ նշված ծանուցումը հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարկման ամսաթիվը: Եթե նույն կետում նշված ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում գնումները համակարգողը գրավոր չի ներկայացնում պարզաբանում կամ ներկայացված պարզաբանումը չի ընդունվում լիազորված մարմնի կողմից, ապա լիազորված մարմնի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված պաշտոնատար անձի կողմից կայացվում է գնումների համակարգողի որակավորումը դադարեցնելու մասին որոշում, որն այն կայացվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է տեղեկագրում: Անձի՝ գնումների համակարգողի որակավորումը համարվում է դադարած՝ նույն կետում նշված որոշումը տեղեկագրում հրապարակվելու օրվանից (...):

2021 թվականի հունվարից մինչև 2023 թվականի հուլիսը ներառյալ ընկած ժամանակահատվածում գնումների համակարգողի որակավորում շնորհված անձանց դիպլոմների պատճենների արժանահավատությունը ստուգելու համար կատարվել է հարցում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն): Վերջինս ի պատասխան հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության, և հիմնադրման օրվանից պետական ուսումնական հաստատությունների կողմից տրված դիպլոմը համարվում է բարձրագույն մասնագիտական կրթության պետական ավարտական փաստաթուղթ: Հայաստանի Հանրապետության պետական մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար բարձրագույն կրթության մասին վկայող փաստաթուղթը պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հատատության կողմից տրված ավարտական փաստաթուղթն

է: Ուսումնասիրության ընթացքում առանձնացվել են մի շարք ավարտական փաստաթղթեր, որոնք տրված են ոչ պետական, չհավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից՝ կից ներկայացնելով 9 անձի կողմից ներկայացված փաստաթղթերը:

Նախարարությունը տեղեկացրել է նաև, որ ՀՀ քաղաքացիների իրավունքները և շահերը պաշտպանելու նպատակով ՀՀ կառավարության 2003 թվականի փետրվարի 6-ի «Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար պետական քննությունների կազմակերպման կարգը սահմանելու մասին» թիվ 231-Ն, ինչպես նաև ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի «Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 197-Ն որոշումների համաձայն՝ մինչև 2017 թվականը հնարավորություն է ընձեռվել նախորդ տարիների ոչ պետական, չհավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտներին հանձնել պետական ավարտական քննություններ և ստանալ պետական ավարտական փաստաթուղթ:

Այս կապակցությամբ Կարգի 25–րդ կետի համաձայն վերջիններիս ուղարկվել է գրավոր ծանուցում, որը 2023 թվականի դեկտեմբերի 15-ին հրապարակվել է նաև տեղեկագրում: Ծանուցմանը արձագանքել են Շողիկ Սուրենի Ղազարյանը, Արփինե Սամվելի Գրիգորյանը, Նատալյա Ռաֆիկի Ստեփանյանը, Վահան Մերուժանի Շահինյանը և Հասմիկ Վազգենի Առաքելյանը:

Հիմք ընդունելով Կարգի 24-րդ կետի 1-ին ենթակետը ու ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել սույն հրամանի հավելվածում նշված անձանց գնումների համակարգողի որակավորումը:

2. Սահմանել, որ սույն հրամանը՝

1) տեղեկագրում հրապարակվում է ստորագրման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում,

2) կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2903800432

X

Signed by: VAHE HOVHANNISYAN 2903800432

ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված

ՀՀ ֆինանսների նախարարի 2024 թվականի

փետրվարի 20-ի N 520-Ա հրամանի

ՑՈՒՑԱԿ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ

Հ	Անուն, ազգանուն	Հանրային ծառայության համարանիշ
	Գայանե Վարդանյան Անանիկի	5603760214
	Շողիկ Ղազարյան Սուրենի	6310670298
	Կարինե Խաչատրյան Սամվելի	5910810626
	Արփինե Գրիգորյան Սամվելի	7607770216
	Նատալյա Ստեփանյան Ռաֆիկի	8108750474
	Աննա Վարդանյան Գագիկի	5407800071
	Վահան Շահինյան Մերուժանի	3801690040
	Արմինե Ենթրյան Հովհաննեսի	7005770099
	Հասմիկ Առաքելյան Վազգենի	5604770549